ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 68/15-Հ 08 04 2024

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՆԵՐՔԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով՝

հրամայում եմ

1. 2024-2025 ուսումնական տարվա ներքին գիտակրթական դրամաշնորհների ֆինանսավորման նպատակով կազմակերպել գիտական թեմաների և կրթական ծրագրերի բարելավմանն ուղղված հայտերի մրցույթ:
2. Հաստատել մրցույթի հրավերի փաթեթը՝ համաձայն Հավելված 1-ի:
3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել
   3.1. գիտական դրամաշնորհի դեպքում գիտական հարցերի գծով պրոռեկտորին (Ռ. Բարխուդարյան),
   3.2. կրթական դրամաշնորհի դեպքում ակադեմիական/ուսումնական հարցերի գծով պրոռեկտորին (Է. Ասրիյան):
4. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ աշխատողներին:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ՝ Հ. Հովհաննիսյան

2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԵՊՀ ՆԵՐՔԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Երևանի պետական համալսարանի (այսուհետ՝ ԵՊՀ) ներքին գիտակրթական դրամաշնորհի (այսուհետ՝ Դրամաշնորհ) նպատակներն են.

1.1.1. խթանել գիտական խմբերի գործունեությունը,

1.1.2. նպաստել գիտական խմբերի երիտասարդացմանը,

1.1.3. ներգրավել ԵՊՀ աշխատակիցներին, օտարերկրյա բարձր վարկանիշ ունեցող գործընկերներին գիտական ու գիտամանկավարժական գործունեության մեջ,

1.1.4. խթանել կրթական ծրագրերի և առարկաների բարելավման գործընթացը,

1.1.5. ներգրավել ԵՊՀ օտարերկրյա գործընկերներին ԵՊՀ մասնագիտական կրթական ծրագրերի բովանդակային բարելավման ու միջազգային չափորոշիչներին համապատասխանեցման գործընթացներում,

1.1.6. խթանել ներքին գիտակրթական համագործակցությունն ու միջգիտակարգային ոլորտների զարգացումը ԵՊՀ-ում:

1.2. ԵՊՀ Դրամաշնորհի հայտերի (այսուհետ՝ Հայտ) մրցույթը (այսուհետ՝ Մրցույթ) անցկացվում է ԵՊՀ ռեկտորի հրամանի համաձայն:

1.3. Երևանի պետական համալսարանի գիտակրթական քաղաքականության վարչությունը համակարգում ու կազմակերպում է ԵՊՀ ներքին գիտական դրամաշնորհի ֆինանսավորման համար նախատեսված մրցույթը, իսկ ուսումնամեթոդական վարչությունը՝ կրթական դրամաշնորհի ֆինանսավորման համար նախատեսված մրցույթը (այսուհետ՝ Վարչություն):

1.4. 2024-2025 ուսումնական տարվա մրցութային կարգով դրամաշնորհային ֆինանսավորման անվանակարգերն են՝ *ֆիզիկամաթեմատիկական, բնագիտական, բանասիրական, հասարակագիտական, հայագիտական* ու *հումանիտար գիտություններ* և *միջգիտակարգային* (յուրաքանչյուր անվանակարգի համար՝ երկուական դրամաշնորհ):

2. Մրցույթը համակարգող Հանձնաժողով

2.1. Դրամաշնորհի հայտերի փորձաքննություն կազմակերպելու նպատակով ձևավորվում է Հանձնաժողով, որի անվանական կազմը հաստատվում է ԵՊՀ ռեկտորի հրամանով:

2.2. Հանձնաժողովը կազմակերպում է փորձաքննություն, հաստատում է փորձաքննության արդյունքները, անհրաժեշտության դեպքում կազմակերպում է կրկնակի փորձաքննություն՝ ռեկտորի հաստատմանը ներկայացնելով ֆինանսավորման երաշխավորված դրամաշնորհների ցանկը:

2.3. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է անդամների ընդհանուր թվի առնվազն 2/3-ը:

2.4. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

3. Խմբի անդամներին ներկայացվող պահանջները

3.1. Դրամաշնորհի ղեկավարը պետք է հանդիսանա ԵՊՀ հիմնական աշխատող:

3.2. Խմբի անդամները, բացառությամբ հրավիրյալ պրոֆեսորի, պետք է հանդիսանան ԵՊՀ աշխատողներ կամ ԵՊՀ ուսանողներ:

3.3. Գիտական դրամաշնորհի ղեկավար կարող է լինել այն անձը, որը՝

3.3.1. ունի գիտական աստիճան,

3.3.2. վերջին հինգ տարիների ընթացքում ունի առնվազն երեք գիտական հրապարակում ՀՀ կառավարության 21 դեկտեմբերի 2023 թվականի N 2298-Ն որոշմամբ հաստատված միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում[1]:

3.4. Կրթական դրամաշնորհի ղեկավար կարող է լինել այն անձը, որը՝

3.4.1. կրթական ծրագրի ղեկավար է,

3.4.2. վերջին հինգ տարիների ընթացքում ունի առնվազն երկու գիտական հոդված միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում կամ մենագրության, դասագրքի հեղինակ է:

[1] Տե՛ս https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=187688:

3.5. Խմբի անդամներից առնվազն մեկը պետք է լինի հրավիրյալ պրոֆեսոր՝ գիտական աստիճան ունեցող ու օտարերկրյա գիտական կազմակերպությունում Դրամաշնորհին առնչվող գիտահետազոտական գործունեությամբ զբաղվող անձ:

3.6. Կրթական դրամաշնորհային ծրագրերում ընդգրկված հրավիրյալ պրոֆեսորին ներկայացվող պահանջներն են՝ բարձր վարկանիշ ունեցող բուհում դասավանդման 5 (և ավելի) տարվա փորձառություն, համապատասխան ոլորտում գիտական աստիճան, ծանոթ լինի Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի QA և EQF համակարգերին՝ ՄԿԾ բարելավմանը միտված գործողությունները ծրագրելու ու իրագործելու համար:

3.7. Գիտական դրամաշնորհներում ընդգրկված հրավիրյալ պրոֆեսորի Հիրշի ինդեքս (h-index), ըստ «Scopus» (https://www.*scopus.com/freelookup/form/author.uri)* գիտատեղեկատվական շտեմարանի տվյալների, Հավելված 1.1-ի.

3.7.1. 1-ին բաժնով ներկայացված Թեմաների համար պետք է լինի առնվազն 7,

3.7.2. 2-րդ բաժնով իրականացվելիք Թեմաների համար՝ առնվազն 3:

3.7.3. Միջգիտակարգային մասնագիտություններով իրականացվելիք Թեմաների դեպքում պետք է դիտարկել հրավիրյալ պրոֆեսորի գիտական ուղղվածությունը:

3.8. Թեմայի իրականացման յուրաքանչյուր տարվա ընթացքում առնվազն 1 կիսամյակ (120 օր) Հրավիրյալ պրոֆեսորը(ները) պետք է գտնվի (գտնվեն) Հայաստանի Հանրապետությունում և դասավանդի (դասավանդեն) 6 կրեդիտին համապատասխան մասնագիտական դասընթացներ: Հատուկ դեպքերում (համապատասխան պրոռեկտորի հաստատմամբ և կարդացվող դասընթացը սեղմ ժամկետում իրագործելու դեպքում) հրավիրյալ պրոֆեսորը կարող է գտնվել Հայաստանի Հանրապետությունում ավելի սեղմ ժամկետներում, բայց ոչ պակաս, քան 60 օր: Պրոռեկտորների արտոնմամբ կարելի է ուսուցման գործընթացը կամ նրա մի մասը կազմակերպել առցանց ձևաչափով:

3.9. Կրթական դրամաշնորհում ընդգրկված հրավիրյալ պրոֆեսորը, բացի վերոնշյալ պահանջներից, դրամաշնորհում ընդգրկված երիտասարդ մասնագետի հետ միասին պետք է մշակի դասավանդվող դասընթացի պլանը, ձևակերպի դասընթացի

վերջնարդյունքները, որոնք պետք է համապատասխանեցվեն ՈԱՇ[2] և ՈՈՇ[3] նկարագրիչներին: Իսկ մեկ կիսամյակ երիտասարդ մասնագետի հետ իրականացրած համատեղ դասընթացներից հետո պետք է կատարի մշտադիտարկում՝ ներկայացնելով առաջարկներ ՄԿԾ բարելավման վերաբերյալ:

3.10. Հրավիրյալ պրոֆեսորն իր էլեկտրոնային փոստի պաշտոնական հասցեից պետք է grants@ysu.am էլեկտրոնային հասցեին ուղարկի իր կենսագրական տվյալները (Curriculum Vitae) ու հաստատող նամակ (Letter of Confirmation)՝ նշելով Դրամաշնորհի իրականացման աշխատանքներին մասնակցության ու Դրամաշնորհի կատարման ընթացքում դասավանդելու պատրաստակամության մասին:

3.11. Դրամաշնորհի ղեկավարն ու կատարողները չեն կարող ընդգրկվել Մրցույթին ներկայացված մեկից ավելի Հայտերում, նույն հայտը միաժամանակ ներկայացնել մեկից ավել մրցույթների, ինչպես նաև հանդիսանալ ԵՊՀ-ի կողմից ֆինանսավորվող այլ ներքին դրամաշնորհի ղեկավարներ կամ կատարողներ, եթե այդ դրամաշնորհների ֆինանսավորումը չի ավարտվում մինչև սույն Մրցույթի ֆինանսավորման սկիզբը:

3.12. Գիտական դրամաշնորհներում ընդգրկված անդամները պետք է լինեն Դրամաշնորհին առնչվող գիտահետազոտական գործունեությամբ զբաղվող երիտասարդ մասնագետներ (առնվազն մեկը ծնված լինի 1993 թվականի հունվարի 1-ից հետո), ընդ որում՝ վերջինս.

3.12.1. կարող է լինել ուսանող կամ դիպլոմավորված մասնագետ,

3.12.2. կարող է լինել գիտական աստիճան ունեցող հետազոտող, եթե գիտական կոչումը ստացել է 2013 թվականի հունվարի 1-ից հետո:

3.13. Կրթական դրամաշնորհային ծրագրի դեպքում երիտասարդ մասնագետը կարող է լինել առնվազն մագիստրոս (բակալավրի աստիճան ունեցող անձը կամ բակալավրիատի ուսանողը չի կարող ընդգրկվել Խմբում):

3.14. Կրթական դրամաշնորհում ներգրավված երիտասարդ մասնագետը պարտավորվում/ծրագրում է դրամաշնորհի ավարտից հետո առնվազն երկու տարվա ընթացքում դասավանդել ԵՊՀ-ում: Համապատասխան պատրաստակամությունը հաստատող նամակ անհրաժեշտ է ուղարկել grants@ysu.am էլեկտրոնային հասցեին:

---

[2] Տե՛ս https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=107449:

[3] Տե՛ս http://armenqa.am/armenqa-project-leaflet/:

3.15. Դրամաշնորհում կարող է ընդգրկվել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հիմնական աշխատակից (որը պետք է ծնված լինի 1993 թվականի հունվարի 1-ից հետո) և բավարարի 3.12.2 կետի պայմաններին: ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից մասնակցի ընդգրկումը կարող է դիտարկվել որպես առավելություն:

4. Դրամաշնորհին ներկայացվող պահանջներն ու ակնկալվող արդյունքները

4.1. Դրամաշնորհի շրջանակում իրականացված հետազոտության արդյունքները հրապարակելիս անհրաժեշտ է նշել ԵՊՀ-ի կողմից ստացած աջակցության մասին.

- *Հետազոտությունն իրականացվել է Երևանի պետական համալսարանի ֆինանսական աջակցությամբ՝ _____ ծածկագրով գիտական դրամաշնորհի շրջանակում:*
- *Исследование выполнено при финансовой поддержке ЕГУ в рамках научного проекта № _____.*
- *The research was supported by the YSU, in the frames of the research project № _____.*

Համապատասխան նշման բացակայության դեպքում հրապարակումը չի համարվելու Դրամաշնորհի արդյունք, հետևաբար չի ընդունվելու Հաշվետվության մեջ:

4.2. Հայտը չի քննարկվում, եթե.

- Դրամաշնորհի ղեկավարի կողմից ներկայացվել է Բիալի ցանկերում (Beall's list, https://beallslist.net/) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված հոդված,
- չի բավարարում Մրցույթի հրավերի պայմաններին,
- միաժամանակ ներկայացված է այլ գիտական մրցույթների:

4.3. Դրամաշնորհի իրականացման ընթացքում, ըստ ներկայացված ժամանակացույցի, Վարչություն է ներկայացվում ընթացիկ Հաշվետվություն, որի հիման վրա Հանձնաժողովը տալիս է եզրակացություն՝ Դրամաշնորհի ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին:

4.4. Դրամաշնորհի իրականացման ընթացքում Վարչությունը կարող է իրականացնել Դրամաշնորհի մշտադիտարկում՝ արդյունքները ներկայացնելով Հանձնաժողովին:

4.5. Մշտադիտարկման արդյունքները Հանձնաժողովը պետք է հաշվի առնի Դրամաշնորհի ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին եզրակացություն տալիս:

4.6. Դրամաշնորհի կատարման ընթացքում Հանձնաժողովի կողմից անբավարար գնահատական ստանալու ու ֆինանսավորումը դադարեցվելու դեպքում Դրամաշնորհի ղեկավարը հինգ տարի ժամկետով զրկվում է ԵՊՀ ներքին դրամաշնորհների դիմելու իրավունքից:

4.7. Դրամաշնորհի ավարտից հետո Վարչություն է ներկայացվում ամփոփիչ Հաշվետվություն, որի հիման վրա Հանձնաժողովը տալիս է եզրակացություն՝ Հաշվետվությունն ընդունելու մասին:

4.8. Վարչությունը կարող է ֆինանսավորման երաշխավորված Դրամաշնորհի անոտացիան և Հաշվետվությունը, ինչպես նաև այլ տվյալներ հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:

4.9. Գիտական դրամաշնորհի ավարտից հետո Խմբի անդամները տվյալ Թեմայի շրջանակում պետք է ունենան Մրցույթի հրավերի «4.1.» ենթակետով սահմանված նշումով հրապարակումներ.

4.9.1. Ֆիզիկամաթեմատիկական և բնագիտական անվանակարգերում ներկայացված թեմաների համար տարեկան առնվազն մեկ (Դրամաշնորհի ընթացքում առնվազն 3 հոդված՝ ըստ ժամանակացույցի) գիտական հոդված միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ամսագրերի դասակարգման 25-ից բարձր տոկոսային խմբում ընդգրկված ամսագրերում՝ համաձայն ներկայացված ժամանակացույցի,

4.9.2. Բանասիրական, հասարակագիտական, հայագիտական ու հումանիտար գիտություններ և միջգիտակարգային անվանակարգերում ներկայացված թեմաների համար տարեկան առնվազն մեկ (Դրամաշնորհի ընթացքում առնվազն 2 հոդված՝ ըստ ժամանակացույցի) գիտական հոդված միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ամսագրերի դասակարգման 10-ից բարձր տոկոսային խմբում ընդգրկված ամսագրերում՝ համաձայն ներկայացված ժամանակացույցի:

4.10. Կրթական դրամաշնորհի ավարտին խմբի անդամները պետք է ունենան առնվազն երեք վերանայված դասընթաց ու դասընթացի նկարագրիչ, ինչպես նաև ՄԿԾ բարելավմանը միտված առաջարկներ:

5. Հայտի ներկայացումը

5.1. Հայտը Վարչություն պետք է ներկայացնի Դրամաշնորհի ղեկավարը: Հայտը պետք է ներառի հետևյալ փաստաթղթերը.

- Դրամաշնորհի ղեկավարի դիմում (Հավելված N 1.2),
- Կրթական ծրագրի ղեկավարի կողմից հաստատող նամակ՝ ուսումնական պլանով նախատեսված դասընթացը հրավիրյալ պրոֆեսորին տրամադրելու նպատակահարմարության վերաբերյալ,
- Խմբի անդամների կենսագրությունները,
- նախագծի նկարագրություն,
- ժամանակացույց,
- ծախսերի նախահաշիվ (այսուհետ՝ Նախահաշիվ):

6. Ժամկետները

6.1. Հայտերը Վարչություն են ներկայացվում աշխատանքային օրերին՝ 10:00-17:00: Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը 2024 թվականի մայիսի 1-ն է:

6.2. Կարևոր ժամկետներ[4]

	Սկիզբ	Վերջ
Հայտի ներկայացման վերջնաժամկետ	մայիսի 1, 2024	
Հրավիրյալ պրոֆեսորի կենսագրական տվյալներ և մասնակցությունը հաստատող նամակ	մայիսի 1, 2024	
Դրամաշնորհի մեկնարկ	սեպտեմբերի 1, 2024	
Իրականացում	Գիտական դրամաշնորհների դեպքում	
	սեպտեմբերի 1, 2024	օգոստոսի 31, 2027
	Կրթական դրամաշնորհների դեպքում 18 ամիս	
	սեպտեմբերի 1, 2024	օգոստոսի 31, 2026

[4] Ժամկետների փոփոխությունը հնարավոր է միայն ԵՊՀ ռեկտորի հրամանով:

7. Հայտերի փորձաքննությունը

7.1. Վարչությունն ուսումնասիրվում է ներկայացված Հայտերի համապատասխանությունը Մրցույթի պայմաններին, ինչի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է Հանձնաժողովի քննարկմանը:

7.2. Հանձնաժողովի որոշմամբ հաստատվում է Մրցույթի պայմաններին բավարարող ու գիտական փորձաքննության ենթակա Հայտերի ցանկը:

7.3. Փորձաքննության ժամանակ գնահատվում են Թեմայի արդիականությունը, մշակվածության աստիճանը, նորույթը, իրականացման նախադրյալները, աշխատանքի ծավալի, իրականացման ժամկետների հիմնավորվածությունը, միջազգային համագործակցության նպատակահարմարությունը, գիտական արդյունքների տնօրինումն ու տարածումը, միջգիտակարգային բնույթը, գիտության տվյալ մասնագիտության առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

7.4. Հանձնաժողովը Վարչության հետ համատեղ մշակում ու հաստատում է Հայտերի գիտական փորձաքննության ու հարցազրույցի գնահատման թերթիկները:

7.5. Հանձնաժողովը անհրաժեշտության դեպքում գիտական փորձաքննության նպատակով կարող է ներգրավել անկախ փորձագետներ:

7.6. Հայտը փորձաքննության է ենթարկվում առնվազն երկու փորձագետների կողմից: Յուրաքանչյուր Հայտի համար փորձագետը լրացնում է փորձաքննության գնահատման թերթիկը:

7.7. Հայտի փորձաքննության վերջնական գնահատականը փորձագետների գնահատականների միջին թվաբանականն է:

7.8. Վարչության ու փորձագետների կողմից Հայտի բովանդակության, փորձաքննության ընթացքի ու արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է՝ համաձայն «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթների:

7.9. Անհրաժեշտության դեպքում կարող էկազմակերպվել հարցազրույցի փուլ գիտական ղեկավարների և/կամ հրավիրյալ պրոֆեսորների հետ:

7.10. Փորձաքննության ավարտից հետո Հայտերի գիտական փորձաքննության վերջնական գնահատականների վարկանիշային ցանկը քննարկվում է Խորհրդում՝ ներկայացվելով համապատասխան պրոռեկտորի հաստատմանը:

7.11. Վարչությունը Դրամաշնորհի ղեկավարներին է տրամադրում փորձաքննության արդյունքները, որոնք ներառում են փորձագետների եզրակացությունները (ապահովելով փորձագետի անանունությունը):

8. Այլ դրույթներ

8.1. Գիտական դրամաշնորհների 36-ամսյա ֆինանսավորման առավելագույն ծավալն է 9 միլիոն 700 հազար ՀՀ դրամ յուրաքանչյուր տարվա համար:

8.2. Կրթական դրամաշնորհների 18-ամսյա ֆինանսավորման առավելագույն ծավալն է 6 միլիոն 700 հազար ՀՀ դրամ յուրաքանչյուր տարվա համար:

8.3. Դրամաշնորհի բյուջեից Հրավիրյալ պրոֆեսորին տրամադրվող աշխատանքի վարձատրության ընդհանուր գումարը յուրաքանչյուր տարվա համար չպետք է գերազանցի 2 միլիոն 500 հազար ՀՀ դրամը, սակայն կարող է հավելվել այլ աղբյուրներից ու ծրագրերից: Հրավիրյալ պրոֆեսորի աշխատանքի վարձատրության ընդհանուր գումարը կարող է վերանայվել՝ կախված Հրավիրյալ պրոֆեսորի կենսագրական տվյալներից, այցի ընդհանուր ժամկետից, կարդացվող կուրսերի ընդհանուր քանակից և այլ ցուցանիշներից:

8.4. Դրամաշնորհների իրականացման համար դրամաշնորհի ղեկավարի աշխատանքի վարձատրություն չի ենթադրվում:

8.5. Դրամաշնորհի ղեկավարի ամբողջական ծանրաբեռնվածությունը հաշվարկելիս 500 ժամ ծանրաբեռնվածությունը լրիվ աշխատանքային ծանրաբեռնվածություն է:

8.6. Դրամաշնորհի շրջանակում գործուղումների և/կամ գրասենյակային սարքերի ձեռքբերման համար նախատեսված գումարը յուրաքանչյուր տարվա համար կազմում է 1 միլիոն 200 000 դրամ, որից 600 000 հազար ՀՀ դրամը կարող է ծախսվել Հրավիրյալ պրոֆեսորի՝ Հայաստանի Հանրապետություն յուրաքանչյուր գործուղման նպատակով:

8.7. Հրավիրյալ պրոֆեսորի կեցությունը երկու կողմերի համաձայնությամբ կարող է կազմակերպվել ԵՊՀ հյուրերի տանը:

8.8. Ընթացիկ դրամաշնորհներում կարելի է փոփոխություններ կատարել՝ դրանք նախապես համաձայնեցնելով Վարչության հետ՝ համապատասխան պրոռեկտորի հաստատմամբ:

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

Բաժին 1	Բաժին 2
1. Ֆիզիկամաթեմատիկական 1.1. Մաթեմատիկա 1.2. Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ 1.3. Ֆիզիկա և աստղագիտություն 1.4. Էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ 1.5. Մեխանիկա 1.6. Նանոտեխնոլոգիա 2. Բնագիտական 2.1. Քիմիա 2.2. Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ 2.3. Կենսաբանական գիտություններ 2.4. Քիմիական տեխնոլոգիաներ 2.5. Նյութագիտություն 2.6. Էկոլոգիա 2.7. Կենսատեխնոլոգիա 2.8. Ֆարմացիա	3. Հասարակագիտական 3.1. Հոգեբանություն 3.2. Տնտեսագիտություն և գործարարություն 3.3. Մանկավարժական գիտություններ 3.4. Սոցիոլոգիա 3.5. Իրավունք 3.6. Քաղաքական գիտություններ 3.7. Սոցիալական և տնտեսական աշխարհագրություն 3.8. Զանգվածային լրատվություն և հաղորդակցություն 4. Հայագիտություն և հումանիտար գիտություններ 4.1. Պատմություն, հնագիտություն 4.2. Լեզվագիտություն, գրականագիտություն 4.3. Փիլիսոփայություն, էթիկա 4.4. Աստվածաբանություն, կրոնագիտություն 4.5. Արվեստագիտություն
5. Միջգիտակարգային դրամաշնորհները ենթադրում են նշված գիտական երկու կամ ավելի բնագավառներում հետազոտությունների համատեղում:	

Հավելված N 1.2

ԵՊՀ ռեկտոր

Հ. Հովհաննիսյանին

ԵՊՀ _____
(ստորաբաժ. անվանում)

աշխատող_____ -ից
(աշխատակցի գիտ. աստիճան, կոչում, անուն-ազգանուն)

_____
(էլհասցե)

_____
(հեռախոսահամար)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ընդունել ԵՊՀ ներքին դրամաշնորհների մրցույթին մասնակցության «_____» վերնագրով հայտը:

Հաստատում եմ, որ ծանոթացել եմ և համաձայն եմ մրցույթի հրավերի պայմաններին:

Դիմող՝ _____ (_____)
(ստորագրություն) *(անուն, ազգանուն)*

«____» _____ 2024 թ.

Հավելված N1.3.1

ԵՊՀ ՆԵՐՔԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՅՏ

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

1. Հայտի
   - վերնագիրը _____
   - Project Title _____
   - բնագավառը / մասնագիտական դասիչը _____
   - Field of Science _____
2. Հուշող (բանալի) բառեր _____
   - Key Words _____
3. Դրամաշնորհի ղեկավարի ազգանունը, անունը, հայրանունը _____

   Principle Investigator (Name, Surname) _____
4. ծննդյան տարեթիվը _____
5. գիտական աստիճանը _____
6. պաշտոնը _____
7. հեռախոսահամարը _____
6. էլեկտրոնային հասցեն _____
7. Թեմայի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը
8. Խմբի (ներառյալ՝ ղեկավարը) անդամների թիվը _____
9. հայցվող ընդհանուր գումարը հազար դրամով _____

10. Դրամաշնորհի ղեկավարի ստորագրությունը _____

«____» _____ 2024 թ.

ՆԱԽԱԳԻԾ

Ներկայացնել հայերեն ու անգլերեն (յուրաքանչյուրը՝ մինչև 10 էջ).

1. անոտացիա,
2. խնդրի արդի վիճակի վերլուծությունը (կրթական ծրագրի արդի վիճակը),
3. թեմայի նպատակներն ու խնդիրները,
4. հետազոտական ծրագիրը (հետազոտական ծրագրի պահանջը միայն գիտական դրամաշնորհի դեպքում),
5. օրացուցային պլանը (ըստ եռամյակների)՝ ներառելով ակնկալվող արդյունքները,
6. միջազգային համագործակցության նախադրյալները (կրթական ծրագրերի համեմատություն՝ բենչմարկ),
7. հրավիրյալ պրոֆեսորի հետ համագործակցության նկարագրությունը (ներառված օրացույցային պլանում),
8. օգտագործված գրականության ցանկը, հղումներ:

Ազգանունը, անունը, հայրանունը	*Հայերեն*	
	Անգլերեն	
	Ռուսերեն	
Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը		
Կրթությունը *(բուհ, մասնագիտություն)*		
Գիտական աստիճանը		
Վերջին թեզի ծածկագիրը, վերնագիրը, պաշտպանության տարեթիվն ու վայրը		
Արտոնագրերի թիվը		
Վերջին 5 տարում հրատարակված գիտական հոդվածները *(նշել վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը).* 1. 2. …		
ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեից ու այլ աղբյուրներից *(նաև օտարերկրյա)* ստացված դրամաշնորհները, նշել ներկայումս ակտիվ դրամաշնորհները. 1. …		

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ ԿԱՏԱՐՈՂԻ ՄԱՍԻՆ[5]

Ազգանունը, անունը, հայրանունը	*Հայերեն*	
	Անգլերեն	
	Ռուսերեն	
Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը		
Կրթությունը *(բուհ, մասնագիտություն)*		
Գիտական աստիճանը		
Վերջին թեզի ծածկագիրը, վերնագիրը, պաշտպանության տարեթիվն ու վայրը		
Աշխատանքի վայրը, պաշտոնը		
Հեռախոսահամար		
Էլեկտրոնային հասցե		
Նախագծին առնչվող հրատարակված գիտական հոդվածները (*նշել հեղինակներին, վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը*). 1. 2. …		

[5] *Ներկայացնել յուրաքանչյուր կատարողի համար:*

Հավելված N1.3.5

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՐԱՎԻՐՅԱԼ ՊՐՈՖԵՍՈՐԻ ՄԱՍԻՆ

Ազգանունը, անունը, հայրանունը	*Հայերեն*	
	Անգլերեն	
	Ռուսերեն	
Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը		
Կրթությունը *(բուհ, մասնագիտություն)*		
Գիտական աստիճանը		
Վերջին թեզի ծածկագիրը, վերնագիրը, պաշտպանության տարեթիվն ու վայրը		
Աշխատանքի վայրը, պաշտոնը		
Հեռախոսահամար		
Էլեկտրոնային հասցե		
Նախագծի ընթացքում հրավիրյալ պրոֆեսորի կողմից կարդացվող հնարավոր դասընթացների ցանկը՝ համաձայնեցված կրթական համապատասխան ծրագրի ղեկավարի հետ.		
Նախագծին առնչվող հրատարակումներ (նշել հեղինակներին, վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը). 1. 2. …		

Հավելված N1.4

ՀԱՅՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (*ներառյալ եկամտային հարկը*)

	2024			2025			2026			2027		
Ազգանուն անուն հայրանուն	ամսական	ամիսների քանակ	պահանջվող գումար	ամսական	ամիսների քանակ	պահանջվող գումար	ամսական	ամիսների քանակ	պահանջվող գումար	ամսական	ամիսների քանակ	պահանջվող գումար
1)												
2)												
3)												
4)												
5)												
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ												

ԱՅԼ ԾԱԽՍԵՐ(*100000 ՀՀ դրամը գերազանցող բոլոր ծախսերը հիմնավորել նախագծում*)

1. ՍԱՐՔԵՐ, ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2024	2025	2026	2027
1)				
...				
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ				
2. ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ (*հիմնավորել նախահաշվի մեկնաբանության մեջ*)	2024	2025	2026	2027
1) գործուղումների տրանսպորտային ծախսեր				
2) գործուղումների կեցության ծախսեր				
3) գործուղումների հետ կապված այլ ծախսեր (*վիզա կամ այլ վճարումներ*)				
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ				

ՀՐԱՎԻՐՅԱԼ ՊՐՈՖԵՍՈՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ

	2024			2025			2026			2027		
Ազգանուն անուն հայրանուն	ամսական	ամիսների քանակ	պահանջվող գումար	ամսական	ամիսների քանակ	պահանջվող գումար	ամսական	ամիսների քանակ	պահանջվող գումար	ամսական	ամիսների քանակ	պահանջվող գումար
1)												
2)												
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ												

Հրավիրյալ պրոֆեսորի գործուղման ծախսեր	2024	2025	2026	2027
1) գործուղումների տրանսպորտային ծախսեր				
2) գործուղումների կեցության ծախսեր				
3) գործուղումների հետ կապված այլ ծախսեր (*վիզա կամ այլ վճարումներ*)				
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ				
ՀԱՅՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ				

Դրամաշնորհի ղեկավար՝

_____ (*ստորագրություն*) _____ (*ազգանուն, անուն, հայրանուն*)

Գլխավոր հաշվապահ՝

_____ (*ստորագրություն*) _____ (*ազգանուն, անուն, հայրանուն*)